ՁԹՈՒԼԱՑՈՂ ԵՌԱՆԴՈՎ

Լրացավ Շահէ արքեպիսկոպոս Անեմյանի ծննդյան 70 տարին: Կյանքի այս յոթ տասնամյակներից հինգը, որպես կուսակրոն հոգևորական, Շահէ սրբազանը նվիրել է Հայ Եկեղեցուն:

Հալեպում հանգրվանած արաբկիրցի ծնողների զավակը նախ ուսանել է Անթիլիասում, ապա Բրյուսելում, այնուհետև անդամագրվել Երուսաղեմի միաբանությանը: Ազգային եկեղեցական հայեցի այս միջավայրը և ստացած աստվածաբանական կրթությունը իրենց արտացոլումն են գտել նրա քարոզներում և հոդվածներում, որոնք, շարադրված լինելով գեղեցիկ արևմտահայերենով և բխելով մեր Եկեղեցու կենդանի ավանդույթից, միաժամանակ արձագանքում են այսօրվա մարդուն հուզող և մտատանջող հարցերին՝ իրենցում ներառելով նաև հոգևոր հայացքը գիտության ժամանակակից նվաճումների հանդեպ:

Տասնամյակներ շարունակ Շահէ սրբազանը զբաղվել է Աստվածաշնչի թարգմանության գրաբար բնագրի և նրա ձեռագրային ընդօրինակությունների ուսումնասիրությամբ, որի հանրագումարը դարձավ 1992 թ. Լիսաբոնում Գյուլբենկյան հաստատության կողմից հրատարակված «Ցուցակ Աստվածաշունչ մատյանի հայերեն ձեռագիրներուն» մեծադիր հատորը: Ծավալուն առաջաբանում արդի բնագրագիտության տվյալների ներառմամբ ներկայացվում են Աստվածաշնչի խմբագրությունները և գրաբար թարգմանությանը առնչվող բազմաբնույթ հարցեր, իսկ բուն աշխատանքը նվիրված է Երևանի Մատենադարանի և հայկական ձեռագրերի մի քանի այլ պահոցների Աստվածաշունչ կամ Աստվածաշնչային որևէ առանձին գիրք պարունակող մատյանների ընդունված ձեռագրագիտական նկարագրությանը:

Հետևողականորեն շարունակելով այս գործը, վերջին տարիներին Շահե սրբազանը ձեռնամուխ է եղել մեր հայագետների կողմից Աստվածաշնչի բնագիրը գիրք առ գիրք կազմելու աշխատանքները համակարգելուն և հրատարակելուն: Նաև Սրբազան Հոր արևմտահայերեն գեղեցիկ թարգմանությամբ լույս է տեսել «Սաղմոսաց գիրքը»:

Հայաստանի անկախության վերականգնումից հետո Շահե սրբազանը նվիրվեց հոգևոր-գիտական իր ծրագրերը հայրենիքում իրականացնելու, ինչպես նաև անցումային շրջանի ծանր վիճակում հայտնված գիտական և ուսումնական հաստատություններին սատարելու գործին: Ի գնահատում գիտա-կազմակերպչական այս աշխատանքների, նրան շնորհվել է Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի, ինչպես նաև Երևանի Պետական Համալսարանի պատվավոր դոկտորի կոչում և ընտրվել է Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական խորհրդի անդամ:

Զբաղեցնող եռանդով Շահե սրբազանը այսօր ևս շարունակում է իր հոգևոր գիտական գործունեությունը: Նա դեկանն է Երևանի Պետական Համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի: Շնորհիվ իր ջանքերի նախկին Խորհրդային Միության տարածքում գտնվող պետական համալսարանների շարքում առաջինը Երևանի համալսարանում բացվեց նման ֆակուլտետ:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, շնորհավորելով Շահե արքեպիսկոպոս Անեմյանին՝ ծննդյան 70-ամյակի կապակցությամբ, արդյունաշատ գործունեության նոր երկար տարիներ է մաղթում բանիբուն հոգևորականին: